

ուսման՝ ձեռքի եւ նիւթի մէջ լեզուներու տեսակ մը համամասն մերձաւորութիւն մը: Ուրեմն իրաւունքը ունենալ ընդունելու, որ բոլոր լեզուները՝ միջնակետէ մը զոյգող ճառագայթներն են, որոնք իրարմէ այնչափ կը հեռանան, որչափ մեծ է ասոնց՝ միջնակետէն ունեցած թաղարձակութիւնը: Ստղագաւառչը կը պնդէ որ բովանդակ յարգգործ յօրինաւորութիւնը եղած ըլլալ ժամանակակա մշուշի մը միակ գոյացութիւն մը, որմէ՝ ետքը առանձինն առանձինն արեւային գրութիւնները, հաստատուն աստղերն իրենց մօրթակներով, բաժնուած ըլլան. եւ թէ այս արեւային գրութիւններն ի սկզբան անդ՝ կը կազմէին ամբողջ մը, մինչեւ որ սակէ ալ անհաստակն զանգուածներ՝ մօրթակներ, քաղաքացան ու բաժնուեցան, եւ կենդանախոյս զօրութեան հետեւութեամբն այս զանգուածէն ալ զարձեւալ՝ քանի մը մասունքներ բաժնուեցան եւ լուսիններ եղան: Ասոր համար լեզուախոյնի ալ հարկ է որ ներուի ենթադրելու թէ՛ ինչպէս որ անհաստակն լեզուաճիւղերը (առմանական, գերմանական, սլաւական), առաջ եկած են լեզուախմբերէ (լատիներէն, շահնական գերմաներէն, նախնական սլաւերէն), ասոնք ալ նախալեզուէ մը (հնդեւրոպական, քամեան - սեմական, ուրալ-այտայեան նախալեզու), նոյնպէս այս նախալեզուներն ալ՝ հասարակաց յատակի մը շառագիւղներն ըլլան: Անհաստակն բարբառները՝ լեզուագիտութեան լուսիններն են, լեզուախմբերը՝ մօրթակային գրութիւններն են. եւ լեզուացեղներն ալ՝ արեւային գրութիւններն: Լուսագիտային վերլուծումը (analyse spectrale) շնչի ստաղզ վրայ (Sirius) յերեւան հանեց այնպիսի տարրեր, որոնք մեր արեւային գրութեան կազմիչ մասունքն են. եւ կը հետեւցնէն սակէ որ թէ շնատար — նաեւ յարգգործ յօրինաւորութեան ուրիշ բեւեռատաղները — եւ թէ արեւն իւր մօրթակներով՝ մինչեւ նոյն նախնական նիւթի մը յառաջ եկած մասունքը ըլլան. ներքի չէ որ լեզուախոյն ալ նման եղաւ կազմութեան մը հանեւ եւ բոլոր լեզուները մինչեւ նոյն նախալեզուի մը շառագիւղները նկատու, քանի որ հին՝ ուր ինչն ալ իւր լուսագիտային վերլուծումը գործող է, Զրաւենհոֆեան գծերը՝ պիտի չպակսին: Թերեւս արդի կենդանի լեզուներու մէջ եղած տարբերութիւնն առաջին ակնարկով՝ զրեթէ անհուն երեւայ (ճիշդ այնպէս ինչպէս երկնայային մարմիններն իրարմէ բաժնուած անջպատը կ'երեւայ), սակայն զանոնք ճիշդ ու խորամանկ քննելէն ետքը, պիտի կարենայ անոնց համար՝ կամ գոնէ իրենց նախնական կազմիչ մասանց նկատմամբ բանաստեղծին խօսքերը գործածուիլ:

... Ամենքը միեւնոյն կերպարանքը չունին, բայց ոչ ալ տարբեր, ինչպէս կը վայել Քրիստոսը:

1 Զրաւենհոֆ Երեւելի բնագէտին անուամբ կը կոչուի՝ լուսագիտ (Spectrum) վրայ նշմարուած գուռնուր ըստգծերը:

2 Facies non omnibus una,
Neo diversa tamen, qualem decet esse sororum.

(Հարունիսիւն)

Հ. Գ. ՄՆՆ.

ՆԱԽԸՆԴՈՒՆԵՐԵՆԻ ՀԵՏՔԵՐ ԶՈՎԵՐԵՆՈՒՄ

Հանդիսիս 1899ի 5երորդ թուում. (էջ 147—149) մեր փորձ արեւը ցոյց տալու, որ զօկերէնի եւ Ղարաբաղի բարբառի մի քանի ձեւերը գրաբարից աւելի հին պիտի լինին: Այն ժամանակ Ս. Սարգսեանից գեղեցիկ աշխատութիւն՝ չունէինք մեր ձեռին, ուր ի միջի այլոց մի շարք նոր բառեր ենք գտնում, որոնք նոյնպէս նախահայերէնի հետքեր են կրում. մայրութեմ-րութեմ-մօրութեմ, մայրին-մօրին, իրաքի-հերիք, հանգի-հնգ, մտակի-մտիկ, կոչալ-կոչիւ, պղպնձ-պղնձ, պղպտեղ-պղեղ եւ այլն...

Արդ ամենի հետ մեր ի նկատի չէինք ունեցել մի շատ կարեւոր երեւոյթ, որ առաջին անգամ մեր ուշագրութիւնը գրաւեց Նրիւսանում. դա էական բայի երրորդ գէմքն է: Այնտեղ ասում են. գնում աս. գալիս աս, ասում աս. տալիս աս. լալիս աս. բերում աս. եւ այլն:

Ստուգելով տեսանք, որ նոյն հնչումներն ունին Ղարաբաղի եւ զօկերի բարբառը: Սարգսեանցն իւր գրքի մէջ ասում է, որ դա պէտք է գրել ա, որովհետեւ. ինչպէս յայտնի է, հնդեւրոպական լեզուներից շատերում բայի 3 գէմքը վերջանում է լով, որը շայտը գէտում հաւասար է յ ի այն էւ յայտնի, որ միավանկ քայերում այդ յնթէւ գրւում է, բայց չի հնչւում. օր. գայ, տայ, կայ, լայ եւ այլն. ուրեմն վերելի բառերն աւելի ճիշդ կարելի էր գրել. գնում ա, գալիս ա, բերում ա եւ այլն ինչպէս որ, իրօք, տեղ տեղ նոյն ձեւով գրել է Հրէտոսին իւր քերականութեան մէջ:

Ար նախորդ յօդուածից գիտնք, որ զօկերէնի այբ բառերի մէջ աւելի հին եւ նախնական է, քան գրաբարի ն. ուստի եւ այս գէպքում, էական բայի երրորդ գէմքն է՝ ծագել է զօկերէնի, կամ որ նոյն է, Արարատեան բարբառի այն. նմանութեան օրինակ կարելի էր ենթադրել, որ դորա յօգնակի երկրորդ գէմքն էլ (էք) նման ծագում պիտի ունենայ: Գորան գրաւոր ապացոյց մենք գտնում ենք «Քնար-Հայկականի» մէջ. «Ողբ Զուղայեցոց», մի երգում (եր. 134), որ գրուած է 1605 թուին, պարզ ու մաքուր աշխարհիկ լեզուով, ուր հանդիպում ենք հետեւեւալ ձեւերին. գնաման աս (էք) մոռանում աս, ունի աս թողման, ողջ աս, ... եւ այլն:

1 Սարգսեան Վարդանի բարբառը (Զօկերի լեզուն) Մոսկով 1883 թ.

Այս տեղից պարզ երևում է որ ներկայի Արարատեան բարբառն էլ ինչպէս նաեւ Ղարաբաղի եւ զօկերի բարբառներն՝ այլ էր այն լեզուից, որ կոչւում էր Ոստինիկ եւ խօսւում էր նոյն Արարատեան գաղտում, քանի որ այդ բարբառը զեռ այսօր պարունակում է ձեւեր, որոնք հին են գրաբարից:

Այդ հին տարրերից մին էլ, մեզ թւում է, որ շեշտը պիտի լինի:

Գրաբարի շեշտը, մեր ներկայ արեւմտեան բարբառների եւ գրական լեզուների նման բառի վերջին վանկի վրայ է ընկնում: Այն ինչ, զօկերի, Ղարաբաղի եւ Արարատեան բարբառներում մի քանի բացառութեամբ շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրայ: Քանի որ հարցն համեմատական հնութեան վրայ է, ինչդիր է ծագում, ո՞րն է արդեօք հինը: Պէտք է նկատել, որ գոյութեան կուրի մէջ, ներկայում, այս շեշտն երբ ընդհարման է գալիս արեւմտեան բարբառների հետ, տեղի փոփոխութեան եւ հետզհետեւ կորչում է: Նոյն իսկ Արարատեան բարբառը, որ կենսամարտի մէջ իւր հարեւանների հետ՝ գրեթէ անպարտելի է, շեշտի վերաբերմամբ միշտ տեղի է տալիս արեւմտեան բարբառների առաջ: Ապացոյց՝ արեւելեան գրական լեզուն, որ հիմք ունենալով Արարատեան բարբառը, գործ է ածում արեւմտեանի շեշտը:

Լեզուի զարգացման ընթացքը, պարզ է, որ տանում է դեպ ի վերջավանս շեշտը, ուստի դժուար է կարծել, թէ արարատեան կամ զօկ բարբառի շեշտն աւելի նոր լինի:

Ի նկատի ունենալով, որ այս բարբառներն հին հնչմունքն ու արտասանութիւնն աւելի աւարատ եւ մաքուր են պահել, ի նկատի ունենալով, որ սորա գրաբարից էլ աւելի հին տարրեր են պահպանել իրանց մէջ, անհաւանական չէ լինի, եթէ կարծենք, որ սորանց շեշտն էլ աւելի հին է, քան գրաբարին:

Այս յօդուածը պատրաստ էր, երբ կարգացիր Պ. Meillet-ի մի նկատողութիւնը. Une Question (Բանասէր. Հ. Ա. գիրք Դ.), ուր հետեւեալ հարցն է տրւում:

1. L'accentuation de l'impératif sur l'initiale est-elle ordinaire à Tiflis? et l'impératif se distingue-t-il à cet égard des autres formes du verbe?

2. La même accentuation est-elle attestée dans d'autres dialectes?

Այս երկրորդ հարցին կարելի է պատասխանել, որ զօկերէնում՝ «շեշտը գնւում է միշտ

վերջից սկսած երկրորդ վանկի վերայ» (Ագուլեցոց բարբառն էր. 49). բացառութիւններ կան, բայց ոչ բայերի մէջ. նոյն կանոնն են թակայ է եւ Արարատեան բարբառը: Ուստի՝ զօկերէնն Երեւանի եւ Թիֆլիզի բարբառի հետ պարզում է այն, որ գրաբար հրամայականում շեշտը հաւանօրէն վերջին վանկի վրայ չէր, այլ նախավերջին, ինչպէս ճիշդ դիտել է Պ. Մէլէն իւր նկատողութեան մէջ. որ մի նեցուկ է մեր վերեւի ենթադրութեանը շեշտի վերաբերմամբ:

Գ. ՎԱՆԾԵԱՆ

Թիֆլիզ, 1900 թ. հոկտեմբեր*:



Մ Ա Յ Ե Ն Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՔՆՆՈՒՄԱՐԻՆԻ Ե ԵՆԿՈՑ ԳՆՄԱՆՈՒՄԻՆ
ԹԱԳՄԱՆՈՒԹԵՆ ՎՐՈՑ

1.

Եզնկայ Ընդդէմ աղանդոց:

(Մննադատութիւն N. Bonwetsch-ի)

Արդէն շատեց ծանօթ էր՝ թէ հին եկեղեցւոյ հերետիկոսներու պատմութեան համար թանկագին աղբիւր մըն է հայագիր Եզնկայ «Ընդդէմ աղանդոց» գիրքը, որ նաեւ անոր ազգակիցներէն մեծապէս գնահատուած է՝ իբրեւ հայ մտածող-գրութեան ոսկեղէն դարուն յատկապէս դասական երկը: Բայց գլխաւորաբար մինչեւ այսօր, — թող Փլյորիփլի գաղղիքէն անբաւական թարգմանութիւնը, Պարիս 1853, — չկար ամբողջ գործոյն թարգմանութիւնը, այլ միայն մէկ քանի հասակոտորները: Արդ ուրեմն ֆրոսշտէտի ծագող վերգապետ Եզնկայ Միքայէլ Շլիդը ըստ կարի բառական թարգմանութիւն մ'ի լոյս հանեց.* Շլիդ, որ ծանօթ է իբրեւ թարգմանիչ «Եանախապատում» Ս. Գր. Լուսաւորչէ, գրքին (Ռէզնյութիւր 1872) իւր թարգմանութիւնը կատարած է Վիեննայի Միխիլեան տպարանի վարչին եւ այժմ նոյն Միխիլեանութեան Կ.Պոլսոյ վանատան Մեծատարին՝ Հ. Գրիգորին Վ. Գալէմբեանի պատրաստած, բայց սակաւին լոյս չտեսած հայ բնագրին վրայէն:*** Հ. Գալէմբեանին Շլիդի

* Չայալով Թուականիս հնութեան մնաց այս յօդուածն ընդունած ենք Մայիս 1878:

ՈՄԻ:

** Des Wardapet Eznik von Kolb Wider die Sekten. Aus dem Armenischen übersezt und mit Einleitung, Inhaltsübersichten und Anmerkungen versehen von Joh. Michael Schmid, Pfarrer in Frohnstetten, Ehrenkanonikus an der griechisch-melkitisch-katholischen Kathedralekirche von Panéas (Caesarea Philippi). Wien 1900. Druck und Verlag der Mechitharisten-Congregation. X, 210 S. 6 Mk.

*** Հայ բնագրին վրայէն՝ այստեղ տպագրական վրիպմամբ դուրս է մտնոյր, եւ նոյն Theol. Literatur-